ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 63-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Նոյեմբերի 29-ին լրանում է Հայաստանի Սովետական Հանրապետության կազմավորման վաթսունհինգ տարին:

Հայ ժողովուրդը, ամեն տարի, թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում մեծ խանդավառությամբ ու նորանոր հաջողություններով է դիմավորում իր ազատագրության օրը: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը այս տարի ևս պատշաճ ձևով է նշում այդ հիշարժան տոնը:

Նոյեմբերի 27-ին, կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլսայանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ և բովանդակալից քարոզ խոսում «Զի թէպէտ եւ եմք ածու փոքր..., սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս...» (Խորենացի) բնաբանով:

Սրբազան հայրը իր քարոզում շեշտում է, թե ինչպիսի մեծ նշանակություն ունեցավ փրկարար նոյեմբերը բազմաչարչար հայ ժողովրդի համար:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հանրապետական մաղթանք՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 63-րդ տարեդարձի առթիվ:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, հանդիսավորությամբ նշվում է Սովետական Հայաստանի 63-րդ տարեդարձը:

Սույն հանդիսությանը ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Եղիշե արքեպ. Տերտերյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և աշխատավորությունը ու բազմաթիվ հյուրեր:

Հանդիսությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսության բացումը կատարվում է ՀՍՍՀ պետական հիմնի նվագով և «Հայր մեր»-ով:

Այնուհետև հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը հանդես է գալիս բացման հետևյալ խոսքով.

«Ողորմությամբ և կամոքն Աստուծո, հավաքվել ենք Արարատի լուռ հայացքի և Ս. Էջմիածնի հովանու ներքո՝ նշելու Հայաստանում սովետական իշխանության հաստատման 63-րդ տարեդարձը:

Նոյեմբերի 29-ը պարզապես մի սիստեմից մի ուրիշ սիստեմի անցում չէր, սովորական խաղաղ ընթացքով անկախության հաստատում չէր, այն մեր լինելության միակ ապավենն էր: Եթե չլիներ նոյեմբերի 29-ը, այսօրվա փոքրիկ Հայաստանն էլ կենթարկվեր մեր մնացյալ հողերի ճակատագրին: Տոնել նոյեմբերի 29-ը՝ նշանակում է նշել ծնունդը, վերընձյուղումը դարավոր հայ ժողովրդի: Հայ ժողովուրդը, որը հասել էր մահվան շեմին,

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԱ-ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴԱՀԼԻՃԸ

անցնող այս 63 տարիների ընթացքում, իր ստեղծագործ աշխատանքով և սովետական մյուս հանրապետությունների եղբայրական աջակցության շնորհիվ, ոտքի կանգնեց և այսօր իր պատվավոր ներդրումն ունի համայն մարդկության առաջընթացի մեջ: Անցնող ամեն տարի մի նոր հաղթանակ ու նոր վերելք է մեր հայրենիքի համար: Ամեն մի կառույց, լինի դա բնակարան, մետրո, օդանավակայան թե մարզական համալիր, անխուսափելիորեն կապում է մեր ներկան մեր անցյալի ու ապագայի հետ: Մեր ներկան կապում է մեկ ապագայի հետ, որովհետև ամեն մի վերելք ու առաջընթաց մի նոր վկայություն է հաստատում, թե Սովետական Հայաստանը համայն հայ ժողովրդի հավիտենական հայրենիքն է»:

Հայկազուն վարդապետի բացման խոսքից հետո, Սովետական Հայաստանի հիմնադրման 63-րդ տարեդարձին նվիրված բովանդակալից վեկուցումով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի վաստակաշատ դասախոս Պարգև Շահբազյանը:

«Այս օրերին հայ ժողովուրդը ամենուրեք, Մայր Հայրենիքում թե սփյուռքում, համազգային մեծ խանդավառությամբ, լավատեսությամբ ու արժանավայել հանդիսավորությամբ դիմավորում է իր հայրենիքի ազատության և անկախության փառապանծ տոնը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 63-րդ տարեդարձը:

Համազգային այս մեծ տոնին, վերածնված հայ ժողովուրդը ուրախ է և հպարտ երանությամբն այն ժողովրդի, որ երկար դարերի ստրկությունից հետո, համառ պայքարով և ապրելու անկոտրում կամքով նվաճել է իր ազատությունը և արդարորեն ուրախանում ու հպարտանում է իր հայրենիքով, իր նվաճումներով, մարդկության առաջընթացին ու ժամանակակից քաղաքակրթությանը բերած իր նպաստով:

Արդարև՝ հայ ժողովրդի պատմության մեջ շրջադարձային նշանակություն ունեցող և ոսկեղեն տառերով գրված անմոռանալի տարեթիվ հանդիսացավ 1920 թվականի նոյեմբերի 29-ը: Այդ տարեթվով վերջակիտվեց հայ ժողովրդի մռայլ ու արյունոտ անցյալը և սկիզբ դրվեց նոր, լուսաշող ներկայի:

Այդ տարեթվով դարերով տրորված, մահվան վիհի եզրին հասած բազմաչարչար, անօգնական և հյուծված հայ ժողովուրդը ոտքի կանգնեց՝ մեկընդմիշտ թոթափելով երկարամյա ստրկության փոշին, փշրելով ապատպրկության շղթան և արևի տակ նվաճելով կյանքի իրավունք, պետականություն և հայրենիք:

Հպարտամյակներ շարունակ հայ ժողովրդի հոգում երբեք չի հանգել ազատության ծարավը և հայրենասիրության խոր զգացմունքը: Եվ նոյեմբերի 29-ը այդ երկու զգացմունքների՝ ազատասիրության և հայրենասիրության, ամենավառ, ամենաշքեղ արտահայտությունը հանդիսացավ: Նոյեմբեր 29-ով նա ստացավ այն, ինչին ձգտել էր դարերով, բայց զուրկ էր մնացել—ունենալ ազատ հող, խաղաղություն, հայրենիք:

Հնուց անտի հայը եղել է մշակութապես զարգացած և քաղաքակրթված ժողովուրդներից մեկը: Իր հայրենիքի աշխարհագրական դիրքի բերումով կանգնած լինելով Արևելքի և Արևմուտքի աշխարհակալ հզոր պետությունների հանգուցային ճանապարհի վրա՝ հայ ժողովուրդը ամենահին ժամանակներից, «ընդ հուր և ընդ ջուր» անցնելով, հարկադրված է եղել տևապես պայքար մղել իր ֆիզիկական գոյության պահպանման համար: Մեզնից յուրաքանչյուրը առավել կամ նվազ չափով ծանոթ է անցյալում հայ ժողովրդի կրած տառապանքներին: Այդ տառապանքներն ու ողբերգությունը չի ապրել աշխարհում գրեթե ոչ մի ժողովուրդ: Սակայն հայ ժողովրդին խորթ է եղել հուսահատությունը: Ոչ մի բռնակալ, ոչ մի բարբարոս չի կարողացել նվաճել ու ընկճել նրա հայրենասիրական ոգին, ապրելու կամքը: Նա դիմացել, կուրծք է տվել դարերի արհավիրքներին, մի ձեռքում «Թուր կայծակին», պաշտպանել է իր հայրենի տունն ու պատիվը. մյուսում՝ իր հոգևոր վենքերը՝ իր հպարտամյա մշակույթը, գիրն ու գրականությունը, որոնք, դարձրած պողպատյա ամրակուռ վահան, հերկել է իր հողը, կերել է իր արդար վաստակի գինը եղող իր հանապազօրյա հացը՝ խորապես հավատացած լինելով, որ հայոց «սևակնած» երկնքում մի գեղեցիկ օր—արև կծագի, կփայլի ազատության ծիածանը հայ երկնակամարի վրա:

Իր գոյության համար մղած դարավոր պայքարում հայ ժողովուրդը հաճախ, խաչակրաց օրերից սկսած, իր աչքերը հառել է Արևմուտքի մերթ այս, մերթ այն քրիստոնյա պետությանը և նրանցից սպասել իր փրկությունը իզուր: Արդարև՝ ի՞նչ տվեց քրիստոնյա Արևմտյան Եվրոպան հայ ժողովրդին. տարիներով չարաշահում «Հայկական հարցի», մի կողմից անվերջանալի շաղակրատանք հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի շուրջ, իսկ մյուս կողմից՝ սանձարձակում Համիդյան ջարդարար, արյունոտ ձեռքերի: Եվ, ինչպես ծանոթ է բոլորիս, այդ ամենի հետևանքը եղավ այն, որ բնաջնջվեց աշխարհի հնագույն և քաղաքակիրթ քրիստոնյա մի ազգի՝ հայ ժողովրդի զգալի մի հատվածի մեծագույն մասը, իսկ մնացոր-

դացն էլ դուրս քշվեց իր պապենական բնիկ հողերից և սփռվեց աշխարհով մեկ: Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա իր ավելի քան մեկ և կես միլիոն եղբայրների և քույրերի գազանային կոտորածի արյունոտ պատմությունը:

1920 թվական: Պատմության թատերաբեմից անհետ կորչելու ստույգ վտանգի առաջ էր կանգնած հայ ժողովուրդը: Աղքատության, սովի, հիվանդությունների մահաբեր ուրվականը սավառնում էր մեր ողջ երկրի վրա: Մեր դարավոր թշնամին, այս անգամ թիրախ դարձրած Արևելյան Հայաստանը, խուժում էր դեպի երկրի սիրտը: Ընդհանուր աղետը, հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանն սպառնացող վտանգը, ամբողջ երկրում առաջ էր բերել համընդհանուր հուսալքություն: Հայ ժողովրդի համար օրհասական մռայլ այդ օրերին էր ահա, որ օգնության ձեռք մեկնեց մեր բարեկամ ռուս ազնիվ ժողովուրդը: Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր, որոնց շնորհիվ արյունաքամ մեր երկիրը ոտք դրեց ազգային-քաղաքական և մշակութային վերածնության միակ ու փրկարար ուղու վրա:

Հայ ժողովրդի ազատագրության և առաջադիմության գործում մեծ է եղել և անուրանալի ռուս ժողովրդի կատարած դերը: Դեռևս շուրջ երկու հարյուրամյակ առաջ հայ առաջավոր մտավորականությունը գիտակցել ու գնահատել էր ռուս ժողովրդի հուսալի բարեկամության անհրաժեշտությունը: Իր երկրի միասնականությունն ու քաղաքական անկախությունը կորցրած հայ ժողովուրդը, հանձին իր հարևան հզոր Ռուսաստանի, տեսնում էր այն միակ իրական ուժը, որի օգնությամբ հնարավոր կլիներ թոթափել գերությունն ու ստրկական անարգությունը:

Առաջինը Աբովյանն էր, որ իր «Վերք Հայաստանի» պատմական վեպում, իբրև մեծ հայրենասեր, արտահայտեց հայ ժողովրդի համակրանքն ու վստահությունը ռուս ժողովրդի նկատմամբ, որի օժանդակության շնորհիվ Արևելյան Հայաստանը փրկվեց պարսկական դաժան բռնակալությունից: «Ռուսի անունը մեկ համար պետք է լինի սուրբ, ինչպես նրա արյունը, որով մենք ապատվել ենք ընդմիշտ ... Ռուսի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարին՝ սեր և անձնվիրություն»: Աբովյանի այս քաղաքական հեռատեսությունը ելնում էր հայ ժողովրդի արմատական և կենսական շահերից և խոր համոզմունքից:

Նոյեմբերյան լուսաբացով հայ և ռուս ժողովուրդների պատմական բարեկամությունը առավել ևս ամրապնդվեց՝ վերածվելով սրբատառուչ և անքակտելի եղբայրության: Մեր հայրենի աշխարհը կարողացավ իր հրաշալի փրկությունը գտնել, հաստատվել, ամրանալ, աշխարհի առջև կանգնել և հիացում պարտադրել բոլորին միայն ու միայն Սովետական Հանրապետությունների Միության կազմության շնորհիվ, որի բաղկացուցիչ անդամներից մեկն է նա այսօր:

Անցնող վաթսուն և ավելի տարիները պատմական մի մեծ ժամանակաշրջան չեն, բայց պատմական են մեր հայրենիքի ու մեր ժողովրդի ձեռք բերած նվաճումները: Այդ կարճ ժամանակաշրջանում բառացիորեն հրաշքի համազոր վիթխարի փոփոխություններ են կատարվել գիտության, գրականության, արվեստի, ժողովրդական կրթության և լուսավորության, առողջապահության, բնակարանային շինարարության, արդյունաբերության, գյուղատնտեսության ասպարեզներում, ինչպես նաև հայ ժողովրդի հոգևոր-բարոյական նոր կյանքի կերտման մեջ: Երեկվա որբի ու ողբի հայրենիքը այսօր դարձել է մշակույթի վառ օջախ, հզոր ու բարգավաճ երկիր, հույսի հայրենիք, լույսի հայրենիք, նոր ու հզոր Հայաստան: Հայրենի ժողովուրդը այսօր իր ստեղծագործ աշխատանքով ու հանճարով ժայռերից վարդեր է քաղում, քարերը վերածվում է հացի, լույսի, կյանքի և կյանքը դարձնում ներկա ու գալիք սերունդների համար բարիքների մի անսպառ աղբյուր: Այսօր, վերջապես, հայ ժողովուրդը տերն է իր հողին, հացին, պատվին ու կյանքին: Մոխիրների միջից հարյա՛վ ոգին հայ ժողովրդի:

Անհնար է այստեղ մի առ մի թվարկել տնտեսական ու մշակութային այն խոշոր տեղաշարժերը, որ կատարվել են Հայաստանում անցնող 63 տարիների ընթացքում: Այդ մասին են վկայում ժամանակակից գործարանների և ֆաբրիկաների նոր շարքերը և նոր տեխնիկայի հիման վրա վերակառուցվող գյուղատնտեսությունը: Պատմական մեծ Հայաստանի արևելյան այս փոքր հատվածի վրա բարեկարգվեց ու գեղեցկացավ հայոց աշխարհը հայկական ճարտարապետական ոճով կառուցված հրաշալի կոթողներով, մշակույթի, գիտության ու արվեստի հոյակապ կառուցումներով: Արարատյան աշխարհը վերածաղկեց, հայոց լեռները բաց արեցին իրենց ընդերքում թաքնված գանձերը, հայրենի հողի վրա բնակվող հայությունը բազմացավ, աճեց և ավելի քան քառապատկվեց: Անանխընթաց թափով զարգացավ քաղաքաշինությունը: Երևանը դարձավ գիտության, մշակույթի, արվեստի և ուսանողական հանրաճանաչ ուսան:

Շնորհիվ պետական հովանավորության և խաղաղ ու ապահով կյանքի, անցնող տասնամյակներում մեր գիտությունն ու մշակույթը



ԵՐԵՎԱՆԻ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ

իրենց բարձրակետին հասան, և մշակույթի տարբեր բնագավառներում հայ ժողովուրդը ծնունդ տվեց հանճարեղ ու տաղանդավոր բազմաթիվ վավակների, որոնցից շատերն այսօր համաշխարհային հռչակ են վայելում և պատիվ բերում հայությանն ու ողջ մարդկությանը:

Ոչ մի դարում, ոչ մի ժամանակ հայ ժողովուրդն ու նրա պատմությունը, բնությունը, արվեստները, նրա առաքինությունները, ցավերն ու ուրախությունները այնպիսի շռայլությամբ ու լիառատությամբ չեն արժանացել օտարների գրչին ու գնահատանքին, ինչպես սովետական ժամանակաշրջանում: Այդ մասին են վկայում աշխարհի չորս ծագերից Հայաստան այցելող ամենազգի հյուրերը, որոնք հիացմունքով են արձանագրում մեր երկրի, մեր ժողովրդի ձեռք բերած աննախընթաց հաջողությունները: Ամեն անգամ, երբ մենք մեր թերթերում կարդում ենք նրանց տպավորությունները, որ «Հայաստանը ծաղկում է և բարգավաճում» կամ նրանց կարծիքը մեր քաղաքամայր Երևանի մասին, որ նա «աշխարհի գեղեցիկ քաղաքներից մեկն է», մեր սիրտը լցվում է հրճվանքի և արդարացի հպարտության զգացումով:

Թույլ տվեք Հայաստան այցելած օտարերկրացի հյուրերի՝ մեր երկրի ու մեր ժողովրդի մասին տարբեր առիթներով ունեցած բազում դրվատալից արտահայտություններից բավարարվել այստեղ քաղվածաբար հիշատակելով միայն մեկ վկայություն: Դա անգլիացի հայտնի մի լրագրողի անվերապահ գնահատականն է Հայաստանի և հայերի մասին: Ահա թե ինչ է ասում նա. «Իրոք դուք շատ ուշագրավ մի ժողովուրդ եք, որ կարողացել եք մնալ այսքան կենսունակ և հավատարիմ ձեր ավանդություններին, երբ ամբողջ պատմությունն ու հանգամանքները ձեր դեմ են եղել: Ինձ թվում է, եթե այսօր ես հայ լինեի, խորապես հպարտ կլգայի ինձ և՛ հայ ժողովրդի պատմությամբ, և՛ ներկա Հայաստանով: Մի՞թե չափազանցություն կլինի ասել, որ Սովետական Հայաստանն արդեն այնպիսի գեղեցիկ, բարգավաճ, զարգացած մի երկիր է դարձել, որին ձգտում էր հայ ժողովրդի ամբողջ պատմությունը: Ձեմ կարծում, որ դա չափազանցություն կլիներ: Ձեր գեղեցիկ, բարեկարգ քաղաքներն ու գյուղերը, ինչպես նաև պատմական անկրկնելի հուշարձանները տեսնելուց հետո, ես հավատացի, որ շուտով դուք կդառնաք աշխարհի ամենազարգացած ու բարգավաճ պետություններից մեկը»:

Այսպիսին են ահա օտարների տասնյակ, հարյուրավոր վկայությունները վերածնված մեր հայրենիքի ու ժողովրդի մասին: Տակավին մեկ դար առաջ ո՞ւմ մտքով կարող էր անցնել, որ ոտնակոխ արված մեր երկիրը, բոլորից արհամարհված, օտար դեսպաններից իսկույն գութ և օգնություն հայցող, արևմտյան դիվանագիտության կողմից բազմիցս խաբված մեր ժողովուրդը ի վիճակի կլինի իր կռացած մեջքը ուղղելու, ոտքի կանգնելու և այսպիսի հրաշքներ գործելու:

Պատմական դժբախտ ճակատագրի բերումով, այսօր հայության գրեթե կեսը դեռևս ապրում է իր հայրենիքից դուրս, աշխարհով մեկ ցրված: Որևէ ազգ, որևէ ժողովուրդ չի կարող ապրել ու գոյատևել առանց հայրենիքի, առանց իր ոտքերի տակ ունենալու սեփական հող: Ինչպես ծառը, այնպես էլ ժողովուրդները ապրում, զարգանում ու զորանում են իրենց արմատներով, սնունդ ու ավիշ ստանում մայր հողից: Արտասահմանի հայության գոյատևումը, հետևաբար, սերտորեն կապված է հայրենիքի հետ: Սովետական Հայաստանը սփյուռքի հայության բարոյական ապաստանն է, օտարության մեջ նրա դժվարին և անհրապույր կյանքը գեղեցկացնող, իմաստավորող հեռավոր երազը, գերագույն հույսը: Սփյուռքի հայությունը, որպեսզի կարողանա պահել իր ինքնությունը, չդիմակալրկվել, պետք է անհրաժեշտորեն իր հոգևոր ու ազգային-մշակութային սնունդն ստանա իր հայրենիքից, առանց որի հայկական ծառի այդ ճյուղերը կլինեն արմատակուրկ, կչորանան ու կկորչեն: Ահա թե ինչու Մայր հայրենիքը, որպես հոգածու ծնող, ըստ կարգի ևեթ իր գուրգուրոտ, բարի ձեռքերը տարածել է իր պանդուխտ, բայց հարազատ զավակների վրա, իր հնարավոր բոլոր միջոցներով աշխատել է տևապես զորավիգ կանգնել նրանց, որպեսզի նրանց հոգիները մայր երկրին և ժողովրդին կապող բարոյական օղակները ոչ միայն չթուլանան ու չխզվեն, այլև առավել ամրանան ու զորանան:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որ դար ու դարեր եղել է հայ ժողովրդի հոգևոր լույսի, ազգային մշակույթի անսպառ աղբյուր ու հայրենասիրության օջախ, հավատարիմ իր անցյալի ավանդությանը, այսօր էլ շարունակում է անշեղորեն կատարել իր հոգևոր, մշակութային և հայրենասիրական պարտքը հայ ժողովրդի նկատմամբ՝ մեծ սիրով և սրբությամբ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, հայրենասեր իր Հայրապետի՝ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, իր պատվավոր բաժինն է բերում հայրենիքի վերաշինության սրբազան գործին՝ վերանորոգելով, կառուցելով ու բարեկարգելով հայ հոգևոր մշակույթի բազում օջախներ: Վայելելով հայրենի կառավարության բարյացակամ օժանդակությունը՝ Ս. Էջ-

միածինը, անցնող տասնամյակների ընթացքում, ամրապնդվեց, ծաղկեց, զորացավ ու դարձավ կազմակերպված կրոնական լուրջ հաստատություն ոչ միայն հայկական, այլև միջեկեղեցական, միջազգային չափանիշով:

Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը, որպես հայոց հայության հոգևոր կենտրոն, այսօր շարունակում է նաև կատարել իր պատմական նվիրական դերը՝ լույս սփռելով արտասահմանի հայության կյանքի վրա և հանդիսանալով ոսկեղեն կամուրջ հայրենիքի և ցսփյուռքի միջև: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր գահակալության առաջին տարիներից բազում հովվապետական այցելություններ կատարեց դեպի սփյուռքի կանական գաղթօջախներ և իր հայրենաշունչ պատգամներով լուսավորեց ու ջերմացրեց իր տարագիր զավակների հոգիները: Նորին Սրբության այդ օրհնաբեր այցելություններն ու պատգամները ունեցան մեր ժողովրդի տարանջատ բեկորները ի մի ձուլող, նրանց հոգիները Մայր Հայրենիքի և Ս. Էջմիածնի շուրջ կենտրոնաձգող ուժեղ ազդեցություն:

1979 թ. մայիսին Փարիզի «Գավո» սրահում սփյուռքահայ հանդիսականների խառնելամ բազմության առաջ արտասանած իր ճառում Հայոց Հայրապետը այսպես էր բնութագրում նոյեմբեր 29-ի ունեցած պատմական փրկարար նշանակությունը մեր ժողովրդի համար. «Նոյեմբեր 29-ով փրկվեցավ այն, ինչ որ շահած էինք Սարդարապատով: Սա կենսական կարևորություն ունեցող ճըշմարտություն մըն է: Նոյեմբեր 29-ն է, որ պատռեց սև դաշնագիրը Ալեքսանդրապոլի, դուրս վտարեց Քարաբեքիր փաշայի վորքերը Հայաստանեն և վերջնականապես ամրացուց հիմքերը նորաստեղծ հայ պետության՝ անվտանգության, խաղաղության և աննախընթաց զարգացումի ու վերաշինության պայմաններու մեջ»:

Մեր հիշողության մեջ անջնջելի պիտի մնան նաև 1980 թ. մայիսի 22-ին Սովետական Հայաստանի 60-ամյակի առթիվ Նորին Սրբության հրապարակած սրբատառ կոնդակի խորիմաստ, իրավ հայրենասիրությամբ ներթափանցված հետևյալ սրտահույզ տողերը, որոնք, իբրև պատգամ, ուղղված էին աշխարհի չորս ծագերում գտնվող բոլոր հայորդիներին. «Մեր օրերի հայկական պետությունը միակ իրական ու ամրակուռ պատվանդանն է հայոց հայրենիքի ու ազգի գոյատևման, և միակ ճշմարիտ գրավականը նրանց ապագա էլ ավելի պայծառ ճառագայթումի:

...Հայե՛ր մայր երկրից և բոլոր երկրներից, միացե՛ք այսօր հոգով ու սրտով և փառք տվեք նախախնամողն Աստծուն անցնող վաթսուն տարիների համար, և աղոթեցեք, որ հայրենական վերածնունդի և ծաղկման տարիները անվերջ շարունակվեն, որ ամեն տեսակի փորձություններ ու վտանգներ հեռու մնան մեր հայրենիքի սահմաններից, որ այլևս երբեք չար ձեռքեր չքանդեն Տունը հայոց, որ այլևս արցունք չտեսնեն մեր մայրերի և քույրերի աչքերը, որ Հայաստանը հավետ մնա կանգուն ու անսասան, շեն ու խաղաղ, և հայոց սեղանների վրա միշտ առատ լինեն հացն ու լույսը, երգն ու աղոթքը, որ հայաստանցին ամեն առավոտ իր հարևանին ողջունի ավանդական «բարի լույս»-ով»:

Այսօր հայրենի հողի վրա ամուր խարբսխած իր ոտքերը՝ հայ ժողովուրդը ամրապնդում է իր հարազատ պետության հիմքերը, հրաշագործում ու պայծառազարդում է հայրենական սուրբ օջախը, որի լույսի ու ջերմության ուժով անօրինակ թափով դարբնվում է ոչ միայն ներկա, այլև գալոց սերունդների երջանկությունը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, և հայ հավատացյալ ժողովուրդը երախտապարտ են հայրենի կառավարությանը և համազգային այս մեծ տոնի առթիվ սրտեռանդն աղոթում են մեր աչքի լույս, մեր սրտի հույս Մայր Հայրենիքի է՛լ ավելի բարգավաճման, մեր ժողովրդի բարօրության և աշխարհի խաղաղության համար:

Թող հավետ օրհնյալ լինի, աչքի լույսի պես պահվի ու պահպանվի հայ ժողովրդի բալակներով կերտված, գեղեցկացած, հզորացած Հանրապետությունը Հայոց:

Փա՜ռք վերածնված հայ ժողովրդին, ողջո՜ւյն մեր պանծալի մայր երկրին՝ Սովետական Հայաստանին»:

Հետաքրքիր և ոգևորիչ վեկուցումից հետո, սկսվում է հանդիսության գեղարվեստական մասը:

Առաջինը ելույթ են ունենում հոգևոր ճեմարանի սաները՝ Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանի ղեկավարությամբ և հերթականորեն կատարում են Է. Հովհաննիսյանի «Սարդարապատ», Կ. Զրբաշյանի «Քեզ ենք երգում» և Ա. Հեքիմյանի «Երևանի առավոտ» երգերը: Այնուհետև ճեմարանի լավագույն սամունքողները հանդես են գալիս հայրենասիրական մի շարք բանաստեղծությունների խմբական արտասանությամբ «Ծաղկի՛ր, ապատ իմ հայրենիք» ընդհանուր խորագրով:

Չորս ստեղծագործությունների կատարմամբ հանդես է գալիս Լենինգրադի կոնսերվատորիայի շրջանավարտ, երիտասարդ շնորհալի երգչուհի Էմմա Պապիկյանը: Նրա կա-

սարողական արվեստը ջերմորեն ընդունվում է ներկաների կողմից:

Ապա ելույթ է ունենում Էջմիածին քաղաքի մշակույթի տան ժողովրդական երգչախումբը՝ խմբավար Մարիկա Եդիգարյանի ղեկավարությամբ: Երիտասարդ երգիչ-երգչուհիներից բաղկացած սույն քառաձայն երգչախումբը մեծ ոգևորությամբ կատարում է Կոմիտասի և Կարա Մուրզայի ստեղծագործություններից:

Գեղարվեստական ծրագրի վերջում ելույթ է ունենում վաստակավոր կոլեկտիվ, Կոմիտասի անվան պետական լարային քառյակը՝ արժանանալով հանդիսականների բարձր գնահատությանն ու խանդավառ ծափահարություններին:

Հավարտ հանդիսության բոլոր ներկաները մեծ գոհունակությամբ հեռանում են դահլիճից՝ իրենց հետ տանելով վերածնված հայրենիքի պայծառ, լուսավոր և խաղաղ ապագայի նկատմամբ իրենց ունեցած հույսն ու հավատը:

ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ